

իր մայրութեան քաղցր բոյրով
 Ես զայն ճանչցայ խորն իմ հոգւոյս,
 Եւ յուզումով և արցնոցով
 Միւռոնեցաւ լոյսն աչքերուս:
 Ո՛րքան պայծառ էր դէմքն տնոր,
 Որպէս ժրպիտ արշալոյսի
 Յողազարդուած կարօտով մօր,
 Մայրութեան լոյս քաղցրութեամբ լի:
 «Մայր իմ, մայր իմ» կանչեցի զայն.
 Մայրն իմ լուռ էր կանգնած խոհուն,
 Աղամանդէ որպէս արձան,
 Ու կը նայէր հեռուն հեռուն:
 Իմ ճանապարհն իմ հեռքն տնայտ
 Աչքերուն մէջ կ'երկարէին,
 Կը խորնային մըլուշապատ,
 Խառնըւելով լոյսը մըթին:
 «Մայր իմ անոյշ, այդ դուն ես հոն,
 Որ կը սպասես ինձ կարօտով.
 Ես այն ճրագն եմ զոր լուցիր դուն
 Մէջը ծոցիդ յուզումներով.
 Ու կախեցիր զայն մեր գիւղին
 Երկնքէն վեր աստղերուն քով.
 Ըսպասեցիր որ ես ծագիմ
 Նոր ու խոշոր արշալոյսով.
 Շատ ու երկար ըսպասեցիր
 Գիշերներուն լապտերդ վառ,
 Օրորանիս քովը ծնրադիր
 Մօր արցունքով լացիր, լացիր:
 Քանի՜ պանդուխտ եկան անցան
 Քու կըսկիծի ճանապարհով,
 Մինչ իմ հեղքերըս թաղուեցան
 Տարիներու փոշիներով:
 Եկած եմ արդ տեսիլքի պէս
 Աչքերուդ մէջ կարօտով թաց
 Գէթ մի անգամ համբուրեմ քեզ
 Քանի երազն ինձ բախտ մընաց:
 Կուրծքիդ տաքուն պտերս դընեմ,
 Դարաւ շըրթներս կաթնաղբիւրիդ,
 Մանկութիւնս իմ լամ ու յիշեմ,
 Մանեակն ըլլամ պարանոցիդ.
 Մայր իմ դուն ինձ թէ չըլլօս
 Ես կը յուզեմ բոլոր քարերն
 Իմ արցունքովս, և որբի պէս
 Լալով կու գամ հիւղիս քովերն»: —
 Մայրըս բացաւ թեքն իւր լայն,
 Վերափոխուած Տիրամօր պէս.
 Ծիածանի փերթեր ինկան,
 Ու սարսուռներ իմ հոգիս:
 Մըթնոլորտն իր շուրջն յուգուելով,
 Կապոյտն առաւ ծիրանի գոյն,

Բոլորեցաւ լոյս դէմքերով
 Կարօտին մէջն իր թռններուն.
 Ինձ մըտերիմ անոյշ դէմքեր
 Իմ հոգիս խորն անդրադարձ,
 Մայրապաշտօն սիրելիներ
 Հըրաշքի պէս մարմին առած:
 Ու մերձեցայ պաշտամունքով,
 Երկիր պագի իր մայրութեան.
 Եւ թըրջեցի հողն արցունքով
 Ոսկիացած առաւօտեան.
 Դունկերէն վեր բաղեցի պէս
 Կուրծքս կուրծքին հանգչեցուցի: —
 Վայ ինձ, այս ի՞նչ անցաւ սրբոյս...
 Ես ցուրտ նոճի մը զըրկեցի.
 Դառը կաթնք կապոյտ արցունք
 Խորն աչքերուս թաց ու խաւար.
 Գըրկեց հոգիս հեղձամըձուկ,
 Հետքս լացաւ եղբայրաբար:
 Ու մեր շուքը սքփեցաւ լուռ
 Յաճ ու մենակ հիւղիս վըրան.
 Դունին համբարձաւ տըխուր, տըխուր,
 Ծածկեց երազն իմ յաւիտեան:

Միւս 10 Մայիս 1927

Հ. Վ. ՅԱՎԱՆԻՍԵԱՆ

ՆՈՒԹԵՐ ԳՈՒԼԿԱՐԱՆՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
 ՄԱՐՏԻՐՈՍ ՂԱՐԻՄՅԻ ԿԱՄ ԿԱՖԱՅԻԻ
 ՏԱՂԵՐԸ ԹՐԱԿԻՈՅ ԵՒ ՊՈՒԼԿԱՐԻՈՅ
 ՀԱՅՈՅ ՎՐԱՅՈՔ

Մարտիրոս Կաֆացիի կենսագրութիւնը
 չէ որ պիտի տամ հոս ոչ ալ այս բազ-
 մարդիւն և բազմաշխատ նշանաւոր Ժէ-
 դարու հայ կրօնականին երկերուն ամբող-
 ջութեան մասին պիտի խօսիմ. այլ պար-
 զապէս իմ անձնական ձեռագիրներու հա-
 ւաքածոյիս մէջ գտնուող հին տաղարանէ
 մ'առնելով պիտի հրատարակեմ (կարծեմ
 առաջին անգամ ըլլալով) իր տաղերը, ու-
 րոնք գրուած են երգիծաւորական
 ոճով անոր ի Պուլկարահայոս ըրած ճամ-
 բորդութեանց ընթացքին, 1674ին առե՛ն-
 ները գրուած այս տաղերը, պատմական
 աղբիւրներ կարելի է նկատել որմէ պիտի
 կարենայ օգտուիլ Պուլկարահայոց պատ-
 մագիրը: Տաղերուն հետ պիտի աւելցնեմ

նաև պատմական համառոտ ծանօթութիւններ իմ հաւարած հում նիւթերու մէջէն։

Զեռագիր Տաղարանիս մասին աւելորդ կը սեպեմ ծանօթութիւն աւելցնել հոս, քանի որ արդէն մանրամասն ցուցակագրած եմ և հետզհետէ պիտի հրատարակուի։

Միայն կ'արժէ աւելցնել որ ձեռագիրս գրուած է սղագրեալ։ Հոնի կողք թէև չի պակսիր, գրութիւնը անխնամ է և 1700ական թուականի արտագրութիւն (էջ 66ին վրայ կայ տաղ մը գրուած ՌՃՀԳին (1173=1724) ծովաստղ եղող ջրիստունեայ ուխտաւորաց նաւու մը վրայ)։ Տաղարանս կը պարունակէ Առաքելի, Նաղաշի (Մկրտչի), Յովհաննէս երզնկացւոյ և ուրիշներու տաղերը։ Վիեննայի Միխթ. Մտղը. թիւ 436 հատակտրոց ձեռագրին ի՞նչ հատուածը ունի իմ այս տաղերուս մէկ մասը. ասիկա ինծի միակ ծանօթ (իմինէս զատ) օրինակն է Մարտիրոսի տաղերուն. ու տրուած տեղեկութիւններէն դատելով իմինիս հնութիւնը նախընտրելի է Վիեննական Միխթ. մտղ.ինէն։

Ա. տաղը գրուած է Դաւիթ երիցու մը վրայ որ պտտած է թրակիտ և Պուլկարիոյ զանազան տեղերը։ Այս տաղս կայ Վիեննայի Մատենադարանի թիւ 436ին մէջ (թուղթ 6ր.)։

Դաւիթ իրիցու գործեալ չարիքն է։ Դաւիթ էրէց յըստմազօրն տեղեւ սուլու մաւնաստիրն։

Դու նուիրակդ յուռումէլն սահմանողին հէրն անիծած։

Ելար յետրէն զնացիր. հինգ վեց ամիս հոն մնացիր,

Զթէլպիսութիւնդ իմացուցիր, էկած ճանպուղ դուրն անիծած։

Գնացիր հասար պապատաղի. տէր մկրտչին եղար եսիքի.

Զփողն կիսեցիր թապախի. քոյ երեսին ջուրն անիծած։

Կեղծիւք շրջիս սեւուկ շալով. փարիսեցի ձեւաւնալով.

Պատմագիրք կու կարգաս, լալով, քոյ արտասուաց ծորն անիծած։

Արաբացի զայլ նմանիս. զձեռ քահանի միայն ունիս.

ժամ ասելով կու փրփրիս. քոյ բերնի փրփուրն անիծած։

Հետ թաթոսին արիւր պագար. կերար զդրամն երկու հազար։

Յետոյ գնացիր սուտ երկփեցար. քոյ պիղծ առուտուրն անիծած։

Աճառներուն դու հիւր եղար. երէք ամիս պատիւն կերար.

Ըզվարագուրն է՞ր զողացար, քեզ նման պիղծ հիւրն անիծած։

Թէլպիսութեան մէջն էս սընէր. մարդ չի կարեր հետ քեզ հներ.

Դու ի մօրէ չար էս ծնէր. քոյ մամդ ու մօր քուրդ անիծած։

Դու չէս էրէց ցեցի որպէս. զօրն ի բուն արիւն կու լակէս.

Գիր գրելով զմարդ կու խաբէս. քո կաղամարի մուրն անիծած։

Դու յայտնապէս յուզայ եղար. այն իրիցու փողի համար.

Յիսուս դուռու կաշաք կերար. քո կնիւս ապուրն անիծած։

Գնացիր բէլթամալճուն ասիւր. մարդ է մեներ շուտով հասիր.

Զորբերու հաջըն կտրեցիր. քո հացի խմորն անիծած։

Այ եզկեկ և խնկար. կէս հալապի չուխին համար.

Էրէց էիր է՞ր զող եղար. քո երեսին ջուրն անիծած։

Համբաւեցիր քեզ ու քաղաք. յամէն երկիր առ հասարակ.

Յուռումէլու զող նուիրակ. քո համբաւուն լուրն անիծած։

Ելար փախար զաղտագողի. զսահաթէ փողն ուտեմ տէքի.

Խօճայ սէֆէր յանկարծակի. հասան թէ ուղուտ անիծած։

Յամօթալի յետ դարձուցին ըզզահաթի դրամն առին.

Զքըսուրըս տարաւ դաթրճին. դաթըմուն այլ փիրն անիծած։

Զի վարձեցին դարձեալ կրկին. խայտառակեց այն ձին.

Ընկեց ի ցեխն քաղաքին. քո թաղուած չամուրն անիծած։

Ելար եկիր խայտառակած. բոլոր անձամբդ ապականած.

Ուրպէս գոմէջ ցեխէն հանած. դողայիր սարսուրդ անիծած։

Մէջ երիցանց յըստամպօլոյ. քեզ նման չար իսկի չկայ.
 Կաշառակուր և տուտ վկայ. քո վարդապետին հէրն անիծած:
 Իղար մէխթմէ մուզի. վայր կու հայրս նըման խոզի.
 Դու բորտոսի գերդ քեզի. նա հին և դու նոր անիծած:
 Նախին անունդ էր քո տէօլվէթ. այժմ եղար խիտ այ տէօլված.
 Ամէնքն քեզ կուտան նալած. գթո ծընած օրն անիծած:
 Հարամ գատա խաբեբայ դու, միշտ կու ծամես զմիս մարդու.
 Ոչ բարով գայիր թուխաթու. եկած սար ու ծորդ անիծած:
 Ով շատ շուեր էպսուդ. այս բաւական լիցի յայժմոյս.
 Իսկի չունիս նամուս. այլ զուրն աւնիծած:

Մարտիրոս Ղըիմցիի յաջորդ տաղը գրուած է «Սօֆիայ քաղաքի իրիցոյ վերայ ասացեալ» այս տաղն ալ անտիպ է, և ասոր մէկ օրինակն ալ կը գտնուի վիեննայի Միխիթ, մտղր. թիւ 436ին մէջ: Սոֆիա Պուլակարիոյ այժմու մայրաքաղաքի հայ գաղութին մասին իմ ունեցած տեղեկութիւններս տալէ առաջ Ղըիմցիի տաղը կը հրատարակեմ:

Սօֆիայ քաղաքի իրիցոյ վերայ ասացեալ:
 Ես մարտիրոս լոկ աբեղայ. տեղոյս անուն կու չի կաֆա.
 Ազգամբ չարին պատահեցայ. ի յօլ քաղաքն սօֆիայ:
 Եկայք ճանապարհէ դաղրած. հեծեծանօք անւածաբ ցաւած.
 Մեք և զրատք մեր խիտ սոված. զի էր անթիւ գօրք հեծելաց:
 Գնացաք ի ժամ դուռն ոչ էր բաց. յահէ զօրացն մտուր փակած.
 Երէք անուն չար մէլ դըրած. զինքն զիւր օրհնօքն անիծած:
 Անուն կոչեն իւրեն յունան. է հաւատոց դատարկ յունայն.
 Զօր ի բուն շրջի մէյխանան. տըղմաթաւալ խոզի նման:
 Մորուքն է թուխ երեսըն սէւ. իսկի չունի քահանի ձեւ.

Բուն բովանդակ մարմնացեալ դէւ. ունի յուով չարիք զիւրեւ.
 Ախոստ որ կա զլուխըն բաշ. ընդ սատանի եղեալ է դաշ.
 Ոչ ընթրիս կու բերէ ոչ ճաշ. գազանաբար կառնէ տաղաշ.
 Զխակներուս հայիֆ արի. որ այն պղծոյն տունն տարի.
 Բնաւ չտուր խոտ և զարի. միթէ իւր ճարգն մարի.
 Ես կու տեսմ թէ բեր բարի. կուտայ զիւր զլուխն ի գարի.
 Ի կնոջն եւս է այրի. գրօղն զինքն ոյլ տանի.
 Զօրն ի բուն շրջի խոռված. չէմ տեսէր իւր պէս նզոված.
 Կարծեմ թէ իսկ չէ մեռունած. և կամ լոկ ձեւ թով օծած.
 Դամատան դուռն չէ ի բաց. և ոչ բնան կանթեղ վառած.
 Զտուրն պահէ խաւար 'ւ ի լաց, աստուած ոչ տայ իւրեն կուշտ հաց:
 Կերպիւ միայն զլուխն է խայտ. կէս կորեկի չունի հաւատ.
 Զինչ որ ասես կանոնէ ինտ. խիտ նզոված է և մուրթատ:
 Խօսքն ու հողոյն է բուն դաւան. իւր երեսին հազար խալած.
 Ասի աստուած տա քո պէլած. շհդի ազգ աս թէ ինչ միլլած.
 Թէ հարցանեմ ճուղապ չի տար. կամ ղօզանջէ անկարգաբար.
 Եւ թէ կրկնեմ երկրորդաբար. անէղ գոչէ քան զգիւհահար.
 Նըման թունիք լցեալ իծի, յերեսն իսկի ծաղր չունի.
 Դէմքըն զգարի և աղտեղի. տեսըն դըմեայ գարհուրելի.
 Մընացանք անդ շաբաթ մի բուն. գորն ասաքից չարեաց պղծոյն.
 Սոված թողոր մեզ զօրն ի բուն. երթեալ շրջէր ինքն ի յօրտուն.
 Քաղաքացիքն իւրմէն պէզար. եկեալ առ իս հարցին հրեար.
 Խըրատ ետու առանձնաբար, կատաղեցաւ գերդ գազան չար:
 Խիտ անգամ և շատ չուեր. ան յիշելի ունի չարեր.
 Տուներն դառնայ հիման աւեր. զինքն պատէ բաւակ ցաւեր.

Առաւօտուն երբ լուսանայ. իւր ժամատեղն է մէյնանայ.

Մինչ ի կէս օր չորս հինգ օխան. զեխի ապա ի տուն դառնայ.

Հանդերձ անձին պատռառտուն. ընդ լուսաւոր առակի մեծ իմաստնոյն.

Քան զսանդի տողեր մերկագոյն. չըջի ընդ վայր զինչ սոված չուն.

Անպէտ մշակ չար ոստիկան. զայգի տիրուն աւարար խոպան.

Անասնակորն և անդարման. ինքն է գիւաց բնակարան.

Ունի և այլ բազում չարեր. որ իսկի մարդ գայն չէ արեր.

Հասցէ իւրեանքն չար օրեր. և զկայենին առցէ երբ.

Քան զայս աւելն այլ ինչ օգոտ. երբ նա անգեղ է զերդ շնորդ.

Ոչ հայ ոչ թուրք և ոչ մուհաւ. զինքն ծածկէ քարէ կարկուտ.

Զոր ինչ իմովս աչօք տեսի. զբաներն ունայն չար իրիցի.

Զթիւն բազմաց ձեզ գրեցի. ես մարտիրոս վարդապետ դրիմեցի.


Հոս կու տամ այն հատուկտոր տեղեկութիւններս զոր կըրցած եմ հաւաքել Սոփիայի Հայ գաղութին մասին. 1549ին Սուլթան Սիւլէյմանի օրով Երեւանի Դոռոթ գիւղէն բազմաթիւ Հայեր հոս կը գաղթեն. 1650ին Ապրօ Զէլէպի կը շինէ եկեղեցի մը. իմ ձեռագրիներու հաւաքածոյի մէջ ունիմ երկու հայերէն ձեռագրիներ զորում Սոփիայ Մին Շարակնոց մ'է նօտրգիր որուն մէջ կայ սա յիշատակարանները. «Թիշատակ է այս աստուածաշունչ տառա մահդապի աստուածատուրին հոգոյն և ծնողացն. սարգիսին. նանի փաշին. և եղբարցն. և զւերն. և ամենայն արեան մերձաւորացն ի քաղաքն Սոփիայ. ի դուռն սբ. աստուածածնայ. թվին ո. դ. բ. (1643) օգոստոս ամսոյ ա. յ. Հոս չմոռնամ աւելցնել որ Սոփիա ունի երկու եկեղեցի իւրաքու իյց և զետնափոր. անտարակոյս ձեռագրիս մէջ յիշուած Ս. Աստուածածնայ այս եկեղեցին հնագոյնն է և հաւանական որ Ապրօ Զէլէպի ոչ թէ շինած այլ 1650ին նորո-

գած ըլլայ 1643ին արդէն գոյութիւն ունեցող այդ եկեղեցին. Ձեռագրիս յաջորդ յիշատակարաններն են. «Ես շուռութեցի կովէրքի որդի միսթարըս զիրիցի խնդրեմք ձեզանէ եւթարք ովոր յանդիպի մէկ պեւ. րան և ծնողացս իմ ողորմի այսչք վարց. քըն քրիստոս դուէ առնի թվի յայհոց ո ճ հ զ ին (1727) յուշիվարին ամասնըն դ. (4)ին ամէն»: Թէն կայն ուրիշ յիշատակարաններ ալ բայց ոչ կարեւոր. Թիշատակարաններէն ոչ մին իր գրչէն է. միայն տեղ մը իր գրչէն ունի «Անտոն կրօնաւոր յիշեցէք»: Կընայ ըլլալ նաեւ որ ձեռագիրս հոս բերուած ըլլայ. իսկ յաջորդ ձեռագիրն է փոքրիկ տաղարան մը որուն մէջ իր գրչէն կայ. «Ես յովանէսի որդի եսաւր զրիցի էս տետրու թիվին ո ճ ի բ (1693) յուլիսի ամսոյն Ժ.ին եղեւ սաւափան»: Հոս յիշուած Յովհաննէսը գուցէ Մարտիրոս Ղրիմեցւոյ յիշած Սոփիայի Թուանն երէցն ըլլայ. Թէեւ այս մասին հաստատուն պատճառ մը չկայ բաց ի ժաւանակի համապատասխանութենէն. Մարտիրոս Ղրիմցի Սոփիա գտնուած է 1673-1674ին միջեւ ատեն մը, և հոն կեցած շարաթ մը. հաւանաբար 1673ին. քանի որ այդ ատեն Սուլթան Մուրատ Լեհաստանի վրայ կատարած արշաւանքին պատճառաւ երկրը՝ այսինքն Սոփիա և իր շրջակայքը՝ կը գտնուէին ճամբուն վրայ և հեծեալ բանակը ողողած էր այս կողմերը ինչպէս որ Ղրիմցի ալ կը վկայէ:

Սոփիայի եկեղեցին գետնափոր է և ասանդութեան համաձայն գետնափոր են ըրած որպէս զի չերբէզ և ուրիշ այլազգիներ, որոնք եկեղեցի պղծելը սովորուածին են ըրած եղբւր, չպղծեն այս եկեղեցին իրենց ջորիները հոն մտցնելով: 1883էն առաջ եկեղեցին կ'այրի. 1883ին Հայք նոր փայտաշէն եկեղեցի մը կը շինեն հոն. 1883էն 1896 հայոց թիւը Հայաստանի մէջ տեղի ունեցած ջարդերուն և հալածանաց պատճառաւ Սոփիայի մէջ կ'անի և մինչև 250 տուն կը հաշուերուի. այսինքն 1250 հոգի. մեծ մասամբ Ա. Պոլսեցի. Կ. Պոլսեցի. վանեցի և քեմախ.

ցի, 1883ին Տէր Արիստակէսի հովուութեան օրով երբ Հայոց այրած եկեղեցին կը վերաշինուի, Պուկարաց մետրապոլիտին արգելքներուն պատճառաւ հայը չեն կրնար Ժաւիթ մեծ եկեղեցի մը շինել և կը գոհանան փայտաշէնով:

Յ. ՔԻՐԻՅԵԱՆ



ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԻՒՏԻՆ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ

Մեզի համար դժուարին է հինգ դար վերջ պայծառ գաղափար մը կազմել տպագրութեան զիւտին կատարած ազդեցութեան նկատմամբ՝ դարուն ընկերութեան վրայ: Պարզ է որ թէ՛ այդ գիւտը և թէ՛ գիւտը հնարողը խանդավառութեամբ դրուատուեցան և փառարանուեցան. այս խանդավառութիւնը այն աստիճանի հասաւ որ մինչև իսկ տպագրութիւնը «աստուածային արուեստ» անուանեցին: Պատմութիւնը մեզի փոխանցած է ժողովրդեան յայտնած այս սքանչացումին և ուրախութեան նկատմամբ բազմաթիւ վաւերաթուղթեր. սքանչացում՝ որու մասնակցեցաւ ոչ միայն ռամիկ ժողովուրդը, այլ նաև իշխանազուները, բարձր եկեղեցականներ, զբաղէտներ և արուեստագէտներ. և այս անգի ունեցաւ ասանց բացառութեան բռնորդ ազդերուն մէջ:

Սակայն պէտք չէ մտածել թէ սոյն խանդավառութիւնը բացարձակ էր ու գիւտը չունէր իր հակառակորդներն ալ, որ երդդիմանային անոր. ընդ հակառակն՝ Տպագրութեան վրայ հրաշացողներու և այդ գիւտը ծառայողներու խումբին ընդդէմ կազմուեցաւ թշնամի խումբ մըն ալ, աւելի սակաւաթիւ, բայց նոյնքան նախանձալոյզ կուռիւր և նոյնքան բռնուն: Այդ նախանձոյզ խումբը մեծ մասամբ կը բաղկանար օրինադիրներէ, որոնց ձեռքէն տպագրութիւնը կը գողնար արուեստին. այդ խումբին միացած էին եկեղեցականներէն ոմանք ալ, որոնք կը կարծէին թէ սրբապղծութիւն կը գործուի Աստուծոյ

խօսքն և պատուէրները պարունակող սուրբ գրքերը ամէնուն ձեռքը տարածելով, ինչ որ պիտի կատարէր տպագրութիւնը: Գիտականանելէն շատեր ալ յարեցան այդ խումբին. ասոնք սարսուռ կը զգային մտածելով որ դրամի փոքրիկ գումարի մը փոխան գիտութեանց նշխարները կրնային հասարակ ժողովրդեան ձեռքն իյնալ և պղծուիլ. տպագրութիւնը կը վերցնէր մէջտեղէն գիտունի և ռամիկ զանազանութիւնը, և այս կը քստմեցնէր գրեհներ: Որով զայրացան այդ գիւտին, և զրպարտութիւններ ու ամէն տեսակ խոշընդոտ և արգելք յարուցին:

Հակառակորդներու գլխաւոր զրպարտութիւնն էր տպագրիչները ներկայացնել իրր կախարհութեան հետեւողներ: Պ. Լիզին կը պատմէ իր Դարոց Արդի Տպագրութեան գրքին մէջ թէ երբ Ֆուսթ Մայանէն մէկ քանի ընկերներու հետ Բարլզ գնաց իր տպագրած մատենաներէն օրինակներ ներկայացնելու, ամբաստանուեցաւ իր ընկերներուն հետ երեսփոխանաց ժողովին առջև իրը դիւահար և կախարդ: Եթէ կրցաւ ազատիլ անոնց ձեռքէն, զայս կը պարտի Լուդովիկոս ԺԱԻ, որ ոչնչացուց խօսարարի վճիռը: Նման դէպքեր գրեթէ ամենուրեք պատահեցան: Եղան նոյն իսկ. զբաղէտ և գիտնական անձեր որ մերժեցին ընդունիլ իրենց մատենադարաններուն մէջ շարժուն գրքերով տպուած գրքերը:

Սակայն կը ցուցնէ միանգամայն թէ առաջին տպագրիչները՝ քիչերը միայն բացառութիւն կը կազմեն, պէտք ունեցան զօրաւոր պաշտպանութիւններու իրենց նոր արուեստը զանազան երկիրներու մէջ գործադրելու համար. և դրամական նշապատներու ալ կարօտացան տպագրութիւնը տարածելու համար:

Հակառակ այդ կատաղի և խուլ պայքարին, զարմանալի արագութեամբ տպագրութիւնը բոլոր աշխարհ ծաւալեցաւ. այնպէս որ նախ քան 1500ի վերջնային, նոր արուեստը ճանչցուած էր և կը կիրարկուէր Եւրոպայի տասնութեց ազգերու մէջ: